Քան զայս այլ ի՞նչ յերկար ասեմ
այս ամէնք առ քեզ.
Եւ շատ բարեաց խօսք ու խաբար,
որ սուտ չկայ ի ներս:

---

122 ամէնք առ քեզ × ամէն փառք քեզ **A**· ամէն քառք քեզ **B**:
124 չկա **A**:

★

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՃԱՌ

Թէ ուր է քաղաքն այն, եւ կամ վասն էր քաղաք կոչի, այսինքն է՝ զի նա քաղէ զամենայն մարդիկ աշխարհէ, եւ անտի քաղուին յարութեամբն, զի հասեալ են հունձք: Եւ անդ քողարկեալ ծածկին տապանօքն· վասն որոյ անդ ասեն առ Աստուած՝ թէ քո եղաք: Վասն որոյ ասէ Յոբ· «Եղիցի քաղաքն իմ գերեզմանն»(1):

ՏՈՒՆՍ ԺԳ

Թէ հարցանես ո՛րն է այն քաղաքն,
ես որ ասեմ քեզ.
Տամ քեզ նշան այն քաղաքին
որ դու հեռի չես:

Զոր ինչ վաճառ կամիս առնել՝
անդր գտանես.
Շատ զանազան զումաշ կայ անդ,
ջանա հասանես:

---

3 նայ **A**:
4 մարդիք **A**: մարդկան **B**: յաշխարհի **A**:
5 անդի **B**:
5–6 հասել **B**:
7 ծածկին × ծաղկին **A**:
7 — վասն որոյ.... **A**:
11 Տուն **B**:
12 + թէ որն **A**:
19 ջանայ **A**:

(1) Յովբ Զ, 10:

Զինչ լաւ կումաշ կայր՝ քաղեցին,
դու այլ ջանա քեզ.
Զլինի թէ դու մահրում մնաս,
ու յետոյ տանջես զքեզ:

Քանի որ դու ապրանք ունես,
վաճառ արա քեզ.
Զլինի թէ դու աղքատ երթաս
ու ոչ ինչ չծախեն քեզ:

Յիմար կուսանքն յետոյ եկին
թէ իւղ գնեմք մեզ.
Ու յորժամ նոքա գին չունէին,
գնացին սեւերես:

Դարձեալ սկսան ի մօյր առնել
թէ իրք մին տան մեզ.
Ասցին թէ չկայ որ բաւական
լինի մեզ եւ ձեզ:

Զամենայն թաղ ի շուրջ եկին
թէ տուք սաղաղայ մեզ.
Ասեն գնացէք ի վաճառականսն
եւ գնեցէք ձեզ:

Ի թաղէ թաղ շուրջ գալն՝ յուշացան,
հարսանիքն էանց ի ներս.
Յետոյ եկին՝ Տէր, Տէր, մեզ բաց·
աէ. Զգիտեմ զձեզ(2):

Զայս Տէրն յայտնեաց յԱւետարանն,
սիրով խրատ մեզ.
Եթէ չտայն յայն քաղաքին
ողորմութիւն ձեզ:

---

21 ջանայ **AB**:
22 մահրում մընաս դժուարընթեռնլի **B**:
24–62 Տուներու առաջին գլխատառերը մոռցուած են:
28 եկան **A**:
31 սեւէրես **AB**:
34 չկա **B**:
37 սաղաղա **B**: + ի մեզ **A**:

(2) Հմմտ. Մտթ. ԻԵ, 11–12:

Յայս տեղս ոչ ճար կայ գործելոյ
ու ոչ մօյր կու տան մեզ.
Ու առանց գնոյ չեն ի ծախել,
որ վաճառ առնեմք մեզ:

Վասն այն գնա դու յայն քաղաքն,
ծանօթացո զքեզ.
Այլ եւ ուսիր զամէն հնարք
զոր ինչ խրատեն զքեզ:

Շուտով քեզ տեղ տես եւ դադարք,
ու անդ ժողովեա զքեզ.
Եւ զամենայն վաճառ զոր կայ,
այսօր արա քեզ:

Զլինի թէ յետոյ առանց գնոյ
վաճառ չտան զքեզ.
Դու շատ ի շուրջ գաս մուրալով
ու մնաս սեւերես:

(Շարունակելի)

Հրտ. Հ. ՆԵՐՍԷՍ ՏԷՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

---

48 կա **AB**:
49 մուր **B**:
50 գընոյ **A**:
52 գնայ **B**: գընա **A**:
53 ծանօթացոյ **AB**:
54 հընարք **B**:
57 ժողովեայ **A**:
60 Զըլինի **B**: գընոյ **B**:
61 չըտան **B**:
62 մուրանալով **B**:
63 մընաս **B**:

ՄԱՄԻԿՈՆԵԱՆՆԵՐՈՒ
ԴՍԵՂԻ ՃԻՒՂԸ

Մամիկոնեաններու այս ճիւղը ե՞րբ հաստատուեցաւ Դսեղի մէջ, յայտնի չէ: Անոնց նախահայրը հոն Համազասպ Մամիկոնեանն էր: Եւ որովհետեւ Մամիկոնեաններու այս ճիւղին մեզի ծանօթ յիշատակարաններէն հնագոյնը 1191 թուականը կը կրէ, ուր իբր մեծ հայ կը ներկայացուի կամ կը յիշուի Համազասպ Մամիկոնեանը, մենք ստիպուած ենք խորհելու որ Դսեղի Մամիկոնեանց այս ճիւղը հիմնուած է ոչ աւելի կանուխ քան 1100 թուականները:

Կարելի չէ կասկածիլ, որ այս ճիւղն ալ, ինչպէս Սասունի Թոռնիկեան Մամիկոնեանց ճիւղը, ուղղակի սերած են Մամիկոնեան մեծ ու անուանի տունէն: Չէ կարելի կասկածիլ, որովհետեւ Դսեղի Մամիկոնեանք խնամիական սերտ կապերով կապուած էին Վաչուտեանց եւ Օրպէլեանց մեծ տուներուն:

Ի՞նչպէս, ինչո՞ւ եւ ե՞րբ Համազասպ Մամիկոնեան Դսեղ հաստատուեցաւ, ասոնք առ այժմ մութ մնացած հարցեր են, հակառակ խիստ հետաքրքրական ըլլալնուն: Իրենց մասին արձանագրութեանց շարք մը միայն հասած է իրենց ժամանակակից պատմական – մատենագրութեան քանի մը վկայութեանց հետ: Ասոնց վրայ հիմնուելով եղած են քանի մը շատ համառօտ ակնարկութիւններ հոս ու հոն մեր արդի մատենագրութեանց մէջ: Ողբացեալ Գարեգին Սրբազան Յովսէփեան կ՚երեւայ թէ մտադիր էր այս Մամիկոնեաններով զբաղելու, ինչպէս զբաղած էր Պռօշեանց, Օրպէլեանց եւն. տոհմերով: Ան կը գրէր. «Տոհմի (Դսեղի Մամիկոնեանց) պատմութեան եւ շինարարութեան մասին ունինք առանձին աշխատութիւն (ԺԳ. դարից սկսած)»(1): Ասիկա կատարած է թէ ոչ՝ չեմ գիտեր: Եթէ կատարած

---

(1) Հաւուց Թառի Ամենափրկիչը, էջ 72, ծան.:

է՝ այն տեղն աշխատութիւնը իր անտիպ գործերուն մէջ պէտք է ըլլայ, քանի որ չէ հրատարակուած։ Սակայն իր անտիպ աշխատութեանց ցանկին մէջ կը պակսի նման աշխատութիւն մը։ Գուցէ հաւաքուած նիւթեր եւ ծրագիր մը միայն գոյութիւն ունէր երբ Սրբազանը անդարձ մեկնեցաւ մեզմէ։

Ամէն պարագայի տակ կ՚երեւայ թէ Սրբազանը ԺԳ. դարից սկսած պիտի գրէր (կամ գրած է) Դսեղի Մամիկոնեաններու մասին, որոնց հիմնուիլը սակայն ԺԲ. դարուն կը նայի։

Դժբախտաբար բացի Սեւանի Աւետարանէն եւ Զիքակոյի Համաբարանի հաւաքածոյին Կարմիր Աւետարանի մէկ յիշատակարանէն՝ ուրիշ ձեռագրական յիշատակարան այս տունին մասին կը պակսի ինծի։ Գարեգին Սրբազան ձեռագրական յիշատակարաններու մասին ալ կը խօսի, որոնք կը վերաբերին այս տան։

Գործունեայ, չինարար եւ եկեղեցասէր եղած են Դսեղի Մամիկոնեանք։ Կ՚երեւայ թէ զինուորական պարտականութիւն ըստանձնած են իբր ենթակայ իշխանութիւն՝ հանդէպ Զաքարէ եւ Իւանէ սպասալարներուն։ Իրենց այս ենթակայութիւնը չարունակուած է անոնց որդի Աւագի եւ Շահնշահի օրով։ Ենթարկուած են Թաթարներուն եւ անոնց ծառայած։ Մասնակցած են պատերազմներու եւ նոյն իսկ ճակատամարտի մէջ զոհեր տուած։

Իրենց տնտեսական յաջողութիւնը որոշ է՝ որ եղած է զինուորական միջոցներէ, այսինքն պատերազմական աւարներէ, քանի որ Դսեղի նման սահմանափակ շրջանի մը ի վիճակի պիտի չըլլար նիւթապէս սատարելու Դսեղի Մամիկոնեանց ճոխ եւ իշխանական չինարարութեան։ Արդարեւ Զաքարեանց հրամանատարութեան տակ իրենց մասնակցութիւնը, եւ այդ ռազմավարութեան յաջողութիւնները, նկատելի կերպով սատարած ըլլալու էին Դսեղի Մամիկոնեանց նիւթական բարելաւման։

Բացի ճարտարապետութենէ եւ քանդակագործութենէ ուրիշ ի՞նչ Հայ մշակութային ճիւղեր բարգաւաճած են Դսեղի Մամիկոնեանց մեկենասութեամբ՝ յայտնի չէ ինծի, քանի որ ինծի ծանօթ չեն ձեռագիրներ իրենց մեկենասութեամբ գրուած ու մանրանկարուած, ինչպէս ինծի ծանօթ չեն իրենց շրջանին իրենց տիրապետած հողամասին մէջ զարգացած միաբանութիւններն ու հեղինակները։ Բնական է ոչ մէկ բան կրնանք ըսել բրուտագործութեան, արծաթագործութեան, ոսկերչութեան, հիւսուածեղէնի եւ դարդագործութեան զարգացման մասին իրենց հովանաւորութեան տակ։ Այդ նիւթերէն իրենց մեկենասութեամբ ոչինչ հասած է կամ ծանօթ է ինծի, ինչպէս օրինակ Պռոշեաններէն, Օրպէլեաններէն, Դոփեաններէն։ Արդարեւ իրենց արձանագրութիւններէն միայն գիտենք որ իրենց եկեղեցական հաստատութիւններուն երբեմն նուիրած են եկեղեցական սպասներ եւ գիրքեր։ Օրինակ, 1221ին Մարծպան Բ. կը վկայէ որ Բարձրաքաշի վանքին տուած է կամ ինչպէս ինք կ՚ըսէ, զարդարեցի մեծագին պատուական սպասիւք խաչիւք եւ մասամբ եւ գրէնաւք։ Իսկ իր որդին Ասլան Բէկ, 1245ին նոյն վանքին տուած կը յիշէ մեծածախ աւետարան ոսկով եւ մարգարտով եւ ակամբք պատուականաւք զարդարած։

Դսեղի Մամիկոնեանց ճարտարապետական եւ քանդակագործական մեկենասութեանց մասին հոս ինծի կարելի չէ արտայայտուիլ, քանի որ այդ նիւթերուն մասին իմ գիտցածս նշանակութիւն չունի։ Երկրորդ, արդէն տոնց մասին խօսուած է Գարեգին Սրբազանի նման ձեռնհաս գրողներէ։ Քանդակագործական գծաձեւերուն մասին, ինչպէս նաեւ պատկերաքանդակներու մասին, հոս խօսիլը աւելորդ է, քանի որ անոնք ամբողջութիւն մը չեն՝ այլ համեմատելի նիւթ։ Սակայն որքան որ կրնանք ըսել, անոնց քանդակագործութիւնը հաւատարիմ է հայկական ընդունուած ոճերուն, ունին արհեստական նուրբ եւ կատարեալ արտադրութիւն, որ ընտիր վկայութիւն մըն է այս Մամիկոնեանց

գնահատութեան աստիճանաչափին։

Իրենց ակիզբին նման՝ իրենց վերջն ալ կը կորսուի անորոշութեան եւ մթութեան մէջ։ Գիտենք որ կը պահեն իրենց գոյութիւնը մինչեւ ԺԴ. դար։ Հաւանաբար Լէնկ Թիմուրեան արշաւանքներուն պատճառաւ եւ անոր յաջորդող քաոսային վիճակը մեծ ազդակներ ըլլալու են, որ Մամիկոնեաններու այս ճիւղին վերջաւորութեան մասին աւելի բան մը չենք գիտեր այսօր։

Այսպէս Դսեղի Մամիկոնեանները գոնէ երկուքուկէս դարու կեանք մը ապրած են, եւ որոշ դեր մը խաղացած մեր պատմութեան զինուորական, եկեղեցական եւ մշակութային կեանքին մէջ։ Սակայն ԴԺ-բախտաբար ստիպուած ենք շատ քիչ ծանօթութեամբ իրենց մասին գոհանալ հոս։ Ես գիրենք յաջորդաբար կը ներկայացնեմ՝ լոկ վաւերական եւ անտարակուսելի արձանագրական եւ մատենագրական տուեալներով։ Հուսկ ճիւղատոմարակ մը կը-տալներով։ Հուսկ ճիւղատոմարակ մը կը-տալու հաշելով աշխատութեանս, ցոյց տալու համար իրենց յաջորդականութիւնը։

ՀԱՄԱԶԱՍՊ Ա.։ – Իր մասին ԴԺբախտաբար ծանօթութիւն չունիմ։ Ինքը եղած կ՚երեւայ նախահայրը Մամիկոնեաններու այս Դսեղի ճիւղին։ Ցայտնի չէ իր ծնողաց անունը, ծննդեան եւ մահուան տեղն ու թուականը, կամ ուրկէ Դսեղ եկած ըլլալը։ Կ՚երեւայ թէ իր անուամբ Մամիկոնեանց այս ճիւղը կոչուած է նաեւ Համազասպեանց, օրինակ, Սարգիս Ա.ի որդի Մարզպանի 1221 Բարձրաքաշ վանքի արձանագրութեան մէջ, ուր կ՚ըսուի ... Մարզպան որդի Սարգսի թոռն Համազասպեանց յազգէ Մամիկոնեանց...։

Համազասպ Ա. կը յիշուի նաեւ նոյն վանքին մեծ եկեղեցիին արեւելեան պատին վրայի արձանագրութեան մէջ. Ես Համլիկ որդի Սմբատա եւ թոռն Համազասպա յազգէ Մամիկոնեանց...։ Այս արձանագրութիւնը 1239 թուականը կը կրէ։ Իսկ ուրիշ մը, որ Մամիկոնեանց այս ճիւղին հնագոյն թուական կրող արձանագրութիւնն է, եւ կը գտնուի Սանահինի վանքին դաւիթին մէջ, ունի ... ի թուին ՈԽ (1191) ես Քուրդս, Հասան, Համազասպ, Սարգիս որդիք Սմբատայ, որդւոյ Համազասպ մարծպանի...»։ Եթէ այս ընթերցումը նախնապէս ճիշտ է, այն ատեն հանելուկ մըն է Համազասպ մարծպանի ձեւը։ Մամիկոնեաններու այս ճիւղը Մարծպան (Մարզպան) գործածած է ոչ թէ իբր տիտղոս՝ այլ իբր անձնանուն, ինչպէս որ պիտի տեսնենք իր կարգին։

Ծանօթ չէ ինծի Համազասպ Ա.ի կնոջ անունը, եւ միայն մէկ որդի մը կը գտնենք յիշատակուած Սմբատ անուն։

ՍՄԲԱՏ Ա.։ – Իր ծննդեան, մահուան եւ այլ մանրամասնութեանց մասին ոչ մէկ ծանօթութիւն։ Կնոջ անունը կը մնայ անծանօթ, սակայն ունեցած է չորս որդիներ, Քուրդ Հասան, Համազասպ եւ Սարգիս, ըստ 1191ի յիշատակարանին։

ՔՈՒՐԴ։ – Սմբատ Ա.ի որդին անծանօթ կը մնայ։ Քուրդ Մամիկոնեան իր եղբայրներուն հետ Սանահինի վանքին դաւիթին դրան ճակտին թողուցած են հետեւեալ արձանագրութիւնը, որ Մամիկոնեանց այս ճիւղին ծանօթ հնագոյն արձանագրութիւններէն մին է.

«Ի թագաւորութեան վրաց Գէորգէի յամիր սպասալարութեան Զաքարայի եւ Իւանայի եղբաւր իւրոյ ի թուին ՈԽ (1191) ես Քուրդս, Հասան, Համազասպ, Սարգիս որդիք Սմբատայ, որդւոյ Համազասպ մարծպանի տուաք զթշա վկէսն ի մեր հայրենեաց ի մեր հողոտայքս ի Սանահին մեր մեռելոց հոգոյն եւ մեր արեւշատութեան ընկալաք հայրս Յովհաննէս եւ եղբարքս եւ գրեցաք զհամբարձում աւրս զամէն եկեղեցիքն Աստուածածնայ մինչ ուխտս ի հաստատութիւն է, զաւր հացն ի նոցա անուն զսեղանիս մի ոք խափանեսցէ»(2)։

Քուրդ, որ Սմբատ Ա.ի չորս զաւակներուն իբր առաջինը կը յիշուի, մեզի ենթադրել տալով որ երէցն էր, ուրիշ յիշատակութիւն չէ թողուցած։ Ծանօթ չէ թէ

(2) Ազգագրական հանդէս։ Գ. գիրք, էջ 283։

ամուսնացած էր կամ զաւակներ ունէր:

ՀԱՍԱՆ: – 1191ի վերը տրուած արձանագրութեան համաձայն, Սմբատ Ա.ի երկրորդ որդին էր: Ամուսնացած էր Մամխաթունի եւ ունէր երկու զաւակներ, Մարծպան եւ Սեւադէ: Հասան, Սեւադէ եւ Մամախաթուն մեռած ըլլալու են 1233էն առաջ, քանի որ այդ 1233 թուականին գրուած Կարմիր Աւետարանին մէջ, որ այժմ Զիքակոյի Համալսարանին հաւաքման մաս կը կազմէ, իր որդին Մարծպան կը գրէ. ... դ. [4] աւր ժամ ջ....ին ա. [1] աւրն հաւր մերոյ հասանայ եւ ... աւրն եղբաւր մերոյ սեւադէի եւ բ [2] աւրն մաւր մերոյ մամխաթուն(ին)...

Հասանի մասին ալ մեր գիտցածը այսքան է միայն:

ՀԱՄԱԶԱՍՊ Բ.: – Սմբատ Ա.ի երրորդ որդին էր Համազասպ Բ.: Անգամ մը միայն կը յիշուի իր չորս եղբայրներուն չարքին 1191ի արձանագրութեան մէջ: Ե՞րբ կամ ո՞ւր ծնած եւ մեռած է՝ յայտնի չէ, եւ ոչ ալ ամուսնացած կամ զաւակներու տէր ըլլալը:

Բարձրաքաշի վանքին 1239էն յիշատակարանին մէջ կը յիշուի. Ես Համլիկ որդի Սմբատա եւ թոռն Համազասպա յազգէ Մամիկոնեանց... ուր կը յիշէ Համլիկ նաեւ ... հաւրեղբայր իմ Մարզպան...: Այս Համազասպը պէտք չէ հասկնալ իբր Համազասպ Բ., այլ իբր Ա.: Իսկ Համլիկ, ինչպէս պիտի տեսնենք, Սարգիս Ա.ի որդի՝ Սմբատ Բ.ի որդին էր:

ՍԱՐԳԻՍ Ա.: – Սմբատ Ա.ի չորրորդ որդին էր, յիշուած 1191ի արձանագրութեան մէջ: Սարգիս Ա. մեռած է 1215ին, ըստ յաջորդ արձանագրութեան.

«Ի ՈԿԴ (1215) թուին կանգնեցաւ խաչս յիշատակ Սարգսի որդւոյ Սմբատայ թոռն Համազասպեանց, որ մեռաւ ի պատերազմի եւ թաղեցաւ ի դուռն Աստուածածնի եւ որդին նորա Սմբատ եւ ամուսին Ազուտ եղուն...»(3):

Ալպօյաճեան, որ օգտուած է այս յիշատակարանէն, չփոթելով կը գրէ. «Այս իշխաններէն (Դսեղի Մամիկոնեանց) առաջին անգամ յանուանէ յիշուած է 1191ին ՀԱՄԱԶԱՍՊ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ, որ պատերազմի մէջ մեռած է եւ թաղուած է Սանահին վանքին մէջ 1215էն առաջ: Ասոր որդին էր ՍՄԲԱՏ (կինը Ազուտ)»(4):

Յիշատակարանը սակայն կը վկայէ որ Սարգիս (Ա.) Սմբատ (Ա.ի) որդին եւ թոռն Համազասպ Ա.ի է որ մեռաւ ի պատերազմի եւ թաղուեցաւ ի դուռն Աստուածածնի եւ ոչ թէ Համազասպ (Ա.): Իսկ որդին նորա (Սարգիս Ա.) Սմբատ եւ ամուսին Ազուտ Սարգիս Ա.ի որդին Սմբատ Բ.ը եւ իր Ազուտ կինն են:

Սարգիս Ա. ունեցած է մեզի ծանօթ երկու զաւակներ, Սմբատ Բ. եւ Մարզպան, որ իր 1221ի յիշատակարանին մէջ (տես իր կենսագրութեան տակ) կ'ըսէ. ... Ես Մարզպան որդի Սարգսի թոռն Համազասպեան յազգէ Մամիկոնեանց...: Այս Մարզպանն է որուն Համլիկ հաւրեղբայր կ'ըսէ 1239ի յիշատակարանին մէջ, որ վերը յիշեցինք, եւ Համլիկի կենսագրութեան տակ ամբողջութեամբ պիտի տամ:

ՄԱՐԾՊԱՆ Ա.: – Հասանի եւ անոր կնոջ Մամխաթունի որդին էր այս Մարծպանը, որուն Ա. համարը կու տամ զինքը զանազանելու համար Սարգիս Ա.ի որդի, եւ Մարծպան Ա.ի հօրեղբօր որդի՝ Մարզպան Բ.էն:

Մարծպան Ա. 1233ին կամ անկէ վերջ ողջ էր եւ Զիքակոյի Համալսարանին Կարմիր Աւետարանին մէջ սա յիշատակութիւնը կը թողուր: (Նկար Թ. 1):

« .... տող մը թերի, վերի մասին կտրատումով...
ու մարծպանս մամիկոն...
ըված չիկայհարա ա(ստուա)ծածին
որ էսոր առաջ եղել մէջում յարկ
ից զէս եկեղեցիս ընդ խովանի
ին արարեալ արդ մեք զէս խոստացէք
... զչեկահարոյ ա(ստուա)ծածինն ետ

(3) Նոյն, գիրք Է–Ը, էջ 283: Տես նաեւ Գ. գիրք, էջ 282, թէեւ աղաւաղեալ:
(4) Պատմական Հայաստանի սահմանները, էջ 273բ:

յիւր հողովն ի ծարխանորորաք եւ տվ(ի) զսպասաւորք եկեղեցւոյս դ. [4] աւր ժամ [ջ..
ին ա [1] աւրն հաւր մերոյ հասանայ եւ ..
աւրն եղբաւր մերոյ սեւադէի եւ
բ [2] աւրն մաւր մերոյ մամխաթու(նին)
Արդ թէ յիմոց կամ յաւտարաց
կամ ելադդեց զէս սիրս խափանել
ջանայ ու զէս եկեղեցիս ել ընդ հարկիւ
անել ջանա մեր ազսի ու տակ ի մեղաց
տէր եղիցի մաւն եւ բաժին ընդուն
եսցի եւ ընդ արիոսիցն առցէ
գրեցավ գիրս ի թվ....»

Ուրիշ տեղեկութիւն կը պակսի ինծի Մարծպան Ա.ի գործունէութեան մասին:

ՍԵՒԱԴԷ: – Որդին էր Հասանայ եւ եղբայր Մարծպան Ա.ի, որ վերը տրուած յիշատակարանին մէջ կը յիշուի: Այլուստ որեւէ ծանօթութիւն չունիմ իր մասին: Որոշ է որ Մարծպան Ա. իր եղբօր յիշատակարանը գրուած ատեն, այսինքն 1233էն վերջ ատեն մը, Սեւադէ կամ Սեւադա մեռած էր:

Կարմիր Աւետարանին մէջ, էջ 237ա, կայ դրչութենէն տարբեր գրչութեամբ բոլորգիր յիշատակարան մը: «Անուամբն Աստուծոյ ամենակալին: Ես Հայրապետ (ստուծո)յ ամենակալին: Ես Հայրա-կան երէցս գնեցի զսբ. աւետարանս, Սեւողայ որդւոյ Վախտանկէ ի հալալ արդեանց իմոց. յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ որդոյն իմոյ մարգար ք(ա)հանայի մոց եւ որդոյն իմոյ մարգար ք(ա)հանայի, եւ այլ ամենայն արեան ազգականացն իմ, ով որ կարդայք կամ աւրինակէք յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր եւ ա(ստուա)ծ զձեզ յիշէ իւր միւս անգամ գալստեան ամէն»:

Հաւանական է որ հոս յիշուած Սեւադան ըլլայ եղբայրը Մարծպան Ա.ի: Այն ատեն պէտք է ընդունիլ որ Սեւադա ամուսնացած էր եւ ունէր որդի մը Վախտանկ, որ Կարմիր Աւետարանը ծախեր է Հայրական քահանայի:

ՍՄԲԱՏ Բ.: – Որդին էր Սարգիս Ա.ի: Իրմէ է Սանահինի վանքին նախադաւիթին սա արձանագրութիւնը: «Ի ՈԿԴ (1215) թուին կանգնեցաւ խաչս յիշատակ Սարգսի որդւոյ Սմբատայ թոռն Համազասպեանց, որ մեռաւ ի պատերազմի եւ թաղեցաւ ի դուռն Աստուածածնի եւ որդի նորա Սմբատ եւ ամուսին Ազուտ եդուն ի Մըղարտն Զարլաղանց հայրենիքն ամենայն չահուզենով յԱստուածածին եւ խ [40] օրավար հող ով զայն հանէ յԱստուածածնէս դ [4]. սբ. ժողովոցն նզովեսցէ յԱստուծոյ: Ես հայր եւ վարդապետ Գրիգոր, Վարդան եւ ամեն միաբանքըս տուաք զամեն եկեղեցիքս քառասնից տաւնին զերկու եկեղեցին Սմբատայ եւ Սարգսի: Ով խափանէ զմերոզրեալ նըզովսն առցին»(5):

(5) Ազգագրական Հանդէս, գիրք Է եւ Ը, էջ 283: Նոյն արձանագրութիւնը կը գտնենք հրատարակուած գիրք Գ, էջ 282:
Այս արձանագրութեան մէջ յիշուած Գրիգոր եւ Վարդան վարդապետները եղած են ստացողներ Զիքակոյի Համալսարանին Կարմիր Աւետարանին (ծաղկեալ մասամբ Իգնատիոս մանրանկարիչէ): Հոն անոնք ունին սա յիշատակարանները:
էջ 139ա. հին բոլորգիր: «Ք(րիստո)ս ա(ստուա)ծ ողորմեա երկուց եղբարց պատուական քահանայից Գրիգորոյ եւ Վարդանայ ստացողի սբ. աւետարանիս ամ(էն)»:
էջ 263բ. հին բոլորգրով: «Երկուք եղբարք պատուականք եւ ընտրեալք քահանայք որ ստացան զսբ. աւետարանս ի հալալ ընչից իւրեանց յիշատակ ինքեանց եւ ծնողաց իւրեանց: Վարդան եւ Գրիգոր որդիք (յատաչին»:
«Ք(րիստո)ս ա(ստուա)ծ ողորմի նոցայ յիւրում գալստեանն ամ(էն)»:
էջ 313ա. գրչութեան երկաթագրով: «Եւ արդ զայս անսպառ կտակս եւ զգանձս անկողոպտելի, Զանճառ երկինս որ բարձեալ ունի զտ(է)րն բոլորից, մեք Գրիգոր եւ Վարդան հարազատք տրուպ եւ նուաստ քահանայք ըստ ձեւ տեսակէ կրաւնաւորք գոլով, ստացաք զընդիրս առաւել քան զամենայն ինչս պատուականս ձեռաց մարդկանց գրելոց, զսբ. աւետարանս, բազում խերեւէչիւք ըստ բարեաց մերում յորս եմք տեղակալի գ...... խաչենոյ ի սբ. ուխ(տս) Գանձասար մենաստան որ .... դղեկիս Սխրյազան հ... առաջնորդու(թեան ուխ)տիս (տ(եառ)ն Յո(վհաննէսի) ... զթ վարդա(պետի) ա(ստուա)ծարեալ»:
էջ 313բ. «ի է պսակ եկեղեցոյ ք(րիստոս)ի մաղթեմք ի յաւկտելոյ ի սմա յիշեսջիք զվերագրեալքս ի տ(է)ր նաեւ զանուանեալ հարազատքս ու զիմսն եւ կարաւտ մնամք աղաւթից ձերոց եւ ծնողս մեր զգիրք փառաց եւ զչահանդուխտ եւ զայլ եղբարսս, եւ զքեր ... զազգայինս մեր, քանզի մեք Գրիգոր եւ



ՆԿԱՐ 1. – Զիքակոյի Համալսարանի կարմիր Աւետարանին Մարծպան Ա.ի Ցիշատակարանը

Սմբատ Բ. եւ իր կինը ունեցած են զաւակներ: Ասոնցմէ մին է Համլիկ որ 1239ի յիշատակարանին մէջ կ'ըսէ. Ես Համլիկ որդի Սմբատա...: Նոյն Բարձրաքաշի վանքին ուրիշ մէկ արձանագրութեան մէջ կը կարդանք. Ես Համլիկ եւ Սադուն կամ Սարգիս եղբայրն էր եւ Սմբատ Բ.ի երկրորդ որդին:

ՀԱՄԼԻԿ: – *Որդին է Սմբատ Բ.ի, որ ամուսնացած էր Մամքանի: Բարձրաքաշի վանքին մեծ եկեղեցւոյ արեւելեան պատին վրայ դուրսէն ունի սա արձանագրութիւնը. «Ի Թու(ին)*

ՈՁԸ (1239)

1 – *Ես Համլիկ որդի Սմբատա եւ թոռն Համազասպա յաղէ Մամիկոնեանց*
կրկին միաբանեցա իմ դերեզմանա-
տանս եւ ամուսին իմ Մամքան եւ ե-
տու յԱ(ստուա)ծածինս տաւնական
զկարմիրքարն
2 – *իւր ամէն եռանդով եւ հաստատեցին*
ինձ յիշատակ մատուռն մի զոր յիմ
յանուն չինեց եւ ետ ինձ հաւրեղբայր
իմ Մարզպան որ անխ(ափ)ան մեր
լինի պատարագն որ անդ լինի: Բ: [2]
Մամքան.
3 – *այ արնեն ի չարաթն: Էթէ ոք յիմոց*
կամ յաւտարաց մեծաց կամ ի փո-
քունց զգեղն խլէ կամ հակառակ կա
ցունց զգեղն խլէ կամ հակառակ կա
եւ զմեր յիշատակն խափանէ Ցուդաի
եւ խաչահանացն մասնակից է
4 – *ՅԺԸ հայրապետացն նզոված է: մեր*
ազգի եւ մեր մեղացն պարտական է
առաջի Ա(ստուծո)յ եւ ես Տիրացու
վ(ար)դ(ապետ) ամէն եղբայրու-
թ(եամ)բս ընկալա զսոցա յոյսն եւ
հաստատեցի արձանագրով որ կա-
տարէ
5 – *աւրհնի յԱ(ստուծո)յ ամէն»:*

Իսկ նոյն այս արձանագրութեան տակ.

1 – *«Ես Համլիկ եւ Սադուն կատարէցաք*
զանդարձ ծնողաց մէրոց եւ տուաք
զՁորաւուանցոյ կէսն յեկեղեց-
2 – *իս եւ սպասաւորք սորայ խոստացան:*
Դ: [4] աւր պատարագ ի տաւնի
Համբարձմանն: Բ: [2] Նրճսին եւ:
Բ: [2] Աղուտին կատարիչք
3 – *աւրհնին յԱ(ստուծո)յ եւ որ հակա-*
ռակ կայ եւ զգեղ խլէ յեկեղեցոյս ի
մէրոց կամ յաւտարաց եւ զմեր ժամ-
4 – *ն խափանէ մեր ազգի եւ մեր մեղացն*
պարտական է առաջի Ա(ստուծո)յ եւ
առցէ նզովս ի Ք(րիստո)սէ»(6):

Համլիկ դեռ կը յիշուի նոյն վանքին ժամատան ՈՂԵ (1246) թուականով արձանագրութեան մէջ իբր վկայ իր հօրեղբօր որդի Գրիգորի եւ Ասլանպէկի հետ(7): սա արձանագրութեամբ.

«Կանգնեցաւ սիւնս եւ սբ նշանքս յի-
շատակ Համէկանն եւ Մամք-
անա որք երկրպագէք
ասացէք Տ(է)ր Ա(ստուա)ծ
ողորմեա նոցա»(8):

Համէկանն թէթէ տպագրական վրիպակ մը չէ, փորագրական վրիպակ մը ըլլալու է, եւ հեշտութեամբ պէտք է սրբագրել Համլկանն:

Համլիկի մասին ուրիշ ծանօթութիւն կը պակսի ինծի: Ե՞րբ մեռած է, կամ թէ զաւակներ ունեցա՞ծ է, չեմ գիտեր:

ՍԱԴՈՒՆ: – *Սմբատ Բ.ի որդին է եւ եղբայր Համլիկի, որուն հետ մէկ անդամ միայն կը յիշուի Համլիկի կենսագրութեան մէջ, մեր տուած երկրորդ եւ անթուական արձանագրութեան մէջ: Ակէ զատ որեւէ տեղեկութիւն չունիմ:*

ՄԱՐԶՊԱՆ Բ.: – *Որդին է Սարգիս Ա.ի եւ եղբայր Սմբատ Բ.ի: Ամուսնացած*

Վարդան որպէս զվտիտ եւ զընդատամոլք ընդալաք զտրաւր մշակին երկնաւոր, աւգնական եղեալ զանուանեամբն ք(րիստոս)ի առ ի հերկեալ զակաւս սրտից ա(ստուա)ծայնոցդ եւ սերմանելոյ զընտիր ցորեանս որ յաղէ...» Մնացեալը եղծուած եւ կարուած, սակայն թուականը կը մնայ որոշ ՈՁԲ (1233), որ դրչութեան թուականն է:

6) *Բարձրաքաշ վանքը եվ նրա Վիմագրությունը: Գ. Սարգսյան: Էջմիածին, 1951 Սեպտ–Հոկտ. էջ 42:*
7) *Նոյն, Նոյ–Դեկտ. էջ 45:*
(8) *Անդ, էջ 49:*

© National Library of Armenia

էր Մամքանա կնոջ, եւ ունէր չորս մանչ եւ մէկ աղջիկ զաւակ։ Կիրակոս Գանձակեցի խօսելով Մարզպանի որդի Գրիգորի մասին, կը վկայէ. «... Գրիգոր իշխանն որդի մարզպանին՝ (սրբադրէ Մարզպանին. Յ. Ք.) եղբայր Ասլան պէկի, Սարգսի եւ Ամիրային, յազգէ Մամիկոնէից»(9)։ Իսկ Քուրդ իշխանի (Վաչուտեանց) մասին խօսած ատեն անոր կինը կը յիշէ Խորիշահ դուստր մարզպանայ (սրբագրէ Մարզպանայ. Յ. Ք.) քոյր Ասլան Պէկին եւ Գրիգորայ(10)։

Մարզպան Բ. թողուցած է քանի մը արձանագրութիւններ, որոնցմէ ինչ որ ծանօթ է ինծի հոս կու տամ։

Բարձրաքաշի վանքին ժամատան հարաւային պատին ճակատը կայ սա արձանագրութիւնը.

«Թու(ին)
ՈՀ (1221)
Ի թագաւորութե(ա)ն Դէաւրդեա որդոյ Թամարին։ եւ իշխանութ(ան) աթաբակ Իւանէի եւ զաւակաց նորա Աւագին եւ Շահնշահի եւ Մարծպան որդի Սա(ր)գսի թոռն Համ(ազասպ)–
եանց յազգէ Մամիկոնեանց շինեցի զվանքս եւ զամէն եկեղեցիքս յիմ հալալ արդեանց եւ արարի ինձ տուն եւ զերեկմանատեղի եւ զաւակաց իմոց եւ ազգականաց եւ Ծա(զկուան)
որ էր իմ հայրենիք զանձագին արարի եւ Սէրեկագոմս աւերակ եր շինեցի եւ աւանդեցի եկեղեցոյս եւ յՈղջարերդի այլի մեծ եւ զարդարեցի մեծագին պատուական սպասիւք խ(ա)չիւք եւ մասամբք
եւ գրէնաւք եւ կարգեցի զ։Բ։ [2] աւագ բեմն պատարագել զՔ(րիստո)ս յիմ անուն անխափան զՋրաւրհնէք աւրն Մամաքան ամուսնո իմո արդ որ հակառակ կա զեղի կամ կոպարի խլել եւ հանել յեկեղեցոյս
ազգի եւ մեր մեղացն պարտական եղիցի առաջի Ա(ստուծո)յ Կաէնի եւ Ցուդաի մասնակից է։ ՅԺԸ։ հայրապետացն նղովեալ եղիցի եւ որ հաստատ պահէ զաւանդս ա...»(11)։

Կ'երեւայ թէ ասոր գրեթէ յար եւ նման արձանագրութիւն մը եւս փորագրել տուած է եւ նոյն տեղը զետեղած Մարզպան Բ.(12)։

Մարզպան Բ. ունի երրորդ արձանագրութիւն մը Գոշայ վանքին Ս. Աստուածածին եկեղեցւոյն կամարին վրայ։

«Ես Մարզպան իշխան եւ որդիք իմ Ասլան բէգ եւ Գրիգոր միաբանեցաք սբ. Աստուածածնիս եւ տուաք ի մեր հայրենեաց Յողջաբերդ այգի մի եւ ա [1] զութան ի հող յարսն ազատ յամէն հարկէ եւ ստացաք բ [2] աւր պատարագ զեկեղեցիս ի տաւնի... որ ի(ափանէ) դատի ի Տեառնէ»(13)։

Ալպոյաճեան խօսելով Մարզպան Բ.ի մասին կ'ըսէ. «1241ին կամ քիչ առաջ կը մեռնի Մարծպան»(14)։ Սակայն աղբիւրը չէ նշանակած։

Բարձրաքաշի վանքին ուրիշ մէկ արձանագրութիւնը 1242 թուականով ակնարկութիւն չունի Մարծպան Բ.ի մահուան մասին։ Ահա այդ արձանագրութիւնը.

«Ի Թ(ուին)
ՈՂԱ (1242)
Ողորմութ(եամ)բն Ա(ստուծո)յ ես Սէվճի ծառա Մարծպանս եւ ամուսին իմ Կատա չինեցաք զմատուռս եւ այլ արդիւնք յեկեղեցիս տվաք Տիրացու վ(ար)դ(ապետ) եւ միաբանքս խոստացան. Ը. [8] աւր պատա(րա)գել զՔ(րիստո)ս յանուն մեր Դ [4] ինձ եւ Դ [4] Կատանին կատարիչքն աւրհնեալ եղիցին»(15)։

Մարծպան Ա.ի որդւոյն Գրիգորի պատրոնութեան միջոցին ալ այս Սէվճիի որդին նոյն վանքին մէջ թողուցած է անթուական արձանագրութիւն մը, որուն մասին Գրիգորի կենսագրութեան միջոցին պիտի խօսիմ։

(Շարունակելի) Յ. ՔԻԻՐՏԵԱՆ

(9) 1910, էջ 259։
(10) Անդ, էջ 351։
(11) Էջմիածին, 1951, Նոյ–Դեկտ. էջ 49–50։
(12) Նոյն, Սեպտ–Հոկտ– էջ 44։
(13) Ազգ. Հանդէս, գիրք Ժ. էջ 24։
(14) Պատմական Հայաստանի Սահմանները, էջ 273բ։
(15) Էջմիածին, Նոյ–Դեկտ. 1951, էջ 46։

ԷՋԵՐ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՆԿԱՐԶՈՒԹԻՒՆԻՑ

ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅ

(ԺԵ. ԴԱՐ)

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ. ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ. ՄԱՆՐԱՆԿԱՐՉԻ ԿԵԱՆՔԻ ԷԱԿԱՆ ԳԾԵՐԸ. ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ. ԱՐԻԵՍՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

1. — Ներածութիւն

Հայ մանրանկարչական եւ գրչագրական արուեստների պատմութեան մէջ իր տեղն ունի տաղանդաւոր արուեստագէտ Յովհաննէս քահանան, որի ստեղծագործական արուեստի հիմնական էջերը ձեղ տանում են ԺԵ. դարի առաջին շրջանը եւ ծանօթացնում հայ մշակոյթի մի լաւագոյն կենտրոնի՝ Խիզանի (Հիզանի), գեղարուեստական դպրոցի ձեւակերպների եւ արուեստական դպրոցի ձեւակերպների եւ էութեան հետ։

Ընդգծենք եւ այն, որ վաստակաւոր արուեստագէտ Յովհաննէս քահանան իր դարաշրջանում փայլել է ո՛չ միայն որպէս իր կոչման բարձրութեան վրայ կանգնած մի խմաստուն հոգեւորական եւ վայելել ժողովրդի սէրն ու համակրանքը, այլեւ մանրանկարչական եւ գրչական արուեստների զարգացման գծով արել է ուշագրաւ նուաճումներ եւ պատիւ է բերել Խիզանի գեղարուեստական դպրոցին։

Սակայն, ուշադրաւ է մի հանգամանք։ Մանրանկարիչ Յովհաննէսն իր գրած ձեռագրերի յիշատակարաններում նեմատագրել է իր գեղարուեստական արժանիքները, իր գրչական եւ նկարչական վարպետութիւնը թերագնահատել է այսպիսի բնորոշիւնը թերագնահատել է այսպիսի բնորոշիւններով. «անարհեստ գրիչ», «անիշխանութեամբ», «զանարժան գրիչ», «մեղմաստ եւ տիմար գրիչ», «զանարժան գրիչ», «զանպիտան ծաղկող», «յոգնամեղ չակ», «զանպիտան ծաղկող», «յոգնամեղ եւ անարհեստ»։ Բայց վաստակաւոր արուեստագէտի աւանդ թողած ձեռագրերը, ծաղկանկարները ու մանրանկարները վկայում են, որ նա ԺԵ. դարում հոչակուել է որպէս առաջնակարգ գրիչ եւ անհման ծաղկող։

Այդ կարեւոր հանգամանքը հաստատում են ԺԵ. դարի բեղմնաւոր գրիչ՝ Զաքարիա քահանայի(*) ձեռքով ՊԾ (850 + 551 = 1401) թուին Խիզանի գեղարուեստական դպրոցում գրած ձեռագիր Աւետարանի յիշատակարանի հետեւեալ տողերը. «... Այլ եւ գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ Զաքարիայի սուտանուն քահանայի, որդւոյ Մկրտիչ քահանայի, եղբօր Յովհաննէս քահանայի՝ խմաստուն եւ անհման գրչի եւ ծաղկողի»։

2. — Դարաշրջանի պատկերը

Ինչպիսի՞ ժամանակում ապրել է եւ բաստեղծագործել մանրանկարիչ Յովհաննէսը։

(*) Խիզանի դպրոցի գրչական արուեստի վաստակաւորների շարքում Զաքարիա քահանան առանձին տեղ ունի։ Նա ԺԵ. դարի լուսաւոր եւ առաջադէմ հոգեւորականներից՝ Մկրտիչ քահանայի որդին է եւ եղբայրը տաղանդաւոր մանրանկարիչ Յովհաննէսի։ Դեռ 1401 եւ 1402 թուականներին, Խիզանի դպրոցում, նա ընդօրինակում է մի Աւետարան։ Այնուհետեւ նրան տեսնում ենք վանում, ուր գրում է մի նոր Աւետարան, ապա՝ 1417 թուին, նորից վերադառնում է Խիզան եւ հայ բառարանագիտութեան նուիրում մի բառգիրք։

© National Library of Armenia